

ՀՀ կենտրոնական բանկը 2022 թվականի սեպտեմբերի 13-ից շրջանառության մեջ է դրել «Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամը:

Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշադրամ

ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆԸ (Օհանես Խաչատուրյան, 1922-2011 թթ.) հայ մեծանուն դիրիժոր է, կոմպոզիտոր, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1967 թ.):

Ծնվել է Երուսաղեմում, երաժշտական մկրտությունը ստացել է Երուսաղեմի կոնսերվատորիայում, դիրիժորական վարպետությունը կատարելագործել Փարիզում, Վիեննայում:

1957-1974 թթ., ինչպես նաև 1991-1994 թթ. եղել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը, հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի գլխավոր դիրիժորը:

Ստեղծագործական գործունեությունը ծավալվել է նաև Հայաստանի սահմաններից դուրս: 1962-1969 թթ. ղեկավարել է Լայպցիգի «Գևանդհաուզ» նվագախումբը և օպերայի նվագախումբը, 1987-1990 թթ. եղել է Ավինյոնի օպերային թատրոնի երաժշտական ղեկավարը: Հանդես է եկել աշխարհի ավելի քան 110, այդ թվում՝ Վիեննայի օպերայի, Բեռլինի ֆիլհարմոնիայի, Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

Մանստրո Դուրյանը գերել ու հմայել է հանդիսատեսին իր «խոսող» ձեռքերի շնորհիվ՝ չգործածելով պարտիտուր ու դիրիժորական փայտիկ: Գրել է «Ձոն Հայրենիքիս» երկը (խոսք՝ Ավ. Իսահակյանի, 1945 թ.), 4 պաստորալ կամերային նվագախմբի համար (1952-1953 թթ.), օրատորիա Կոմիտասի երկերի թեմաներով (1955 թ.), «Կոմիտասական» 2 սյուիտ սիմֆոնիկ նվագախմբի համար (1962 թ., 1971 թ.), ստեղծել է «Ունիվերսալիզմ» երաժշտական համակարգը (1975 թ.):

Պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով (1996 թ.), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (1997 թ.), արժանացել է Ֆրանսիայի արվեստների և գրականության շքանշանի ասպետի կոչմանը (1998 թ.):

Դիմերես՝ Օհան Դուրյանի հեղինակած «Ունիվերսալիզմ» ստեղծագործությունից հատված և նրա ստորագրությունը:

Դարձերես՝ Օհան Դուրյանի դիմանկարը և նրա «խոսող» ձեռքերը:

Էսքիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան:

Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925 ⁰
Քաշը	33,6 գ

Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Թողարկման քանակը	200 հատ
Թողարկման տարեթիվը	2022

Ծանուցում

Հուշադրամները թանկարժեք մետաղներից պատրաստված դրամներ են, որոնք թողարկվում են երկրի ազգային, միջազգային, պատմամշակութային, հոգևոր և այլ արժեքները հասարակությանը ներկայացնելու, դրանք մետաղի տեսքով հավերժացնելու, ինչպես նաև դրամագիտական շուկայի պահանջարկը բավարարելու նպատակով:

Ինչպես ցանկացած դրամ, հուշադրամներն ունեն անվանական արժեք, որով և ներկայանում են որպես վճարամիջոց: Սակայն հուշադրամների անվանական արժեքը շատ ավելի ցածր է ինքնարժեքից, որը բաղկացած է հուշադրամի պատրաստման համար օգտագործված թանկարժեք մետաղի արժեքից, արտադրության և այլ ծախսերից: Ցածր անվանական արժեքն ու բարձր ինքնարժեքը հնարավորություն են տալիս այս տեսակի դրամը դիտարկելու ոչ թե որպես դրամաշրջանառության մեջ օգտագործվող վճարամիջոց, այլ որպես հավաքորդական առարկա: Հուշադրամներն ունեն նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի գին:

Հուշադրամները՝ հանդիսանալով հավաքորդական առարկա, թողարկվում են խիստ սահմանափակ քանակով և չեն վերաթողարկվում:

Դրամագետները, հավաքորդներն ու պարզապես ցանկացողները կարող են գնել ՀՀ հուշադրամները ՀՀ կենտրոնական բանկի [«Դրամագետ»](#) վաճառասրահից, որը գործում է բանկի ներսում և բաց է բոլորի համար:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am